

# ԿՈՆՎԵՆՑԻԱ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՎԱՍՏՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Իսպանիայի Թագավորությունը, ցանկանալով կնքել Եկամտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիա, համաձայնեցին հետևյալի շուրջ:

### Հոդված 1 ԸՆԴՊՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

### Հոդված 2 ԸՆԴՊՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐԸ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմինների կողմից եկամտների և գույքի նկատմամբ սահմանված հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտների և գույքի հարկեր են համարվում ընդհանուր եկամտի, ընդհանուր գույքի կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերի նկատմամբ սահմանված հարկերը, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացված եկամտների, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի ընդհանուր գումարի, ինչպես նաև գույքի արժեքի հավելաձի նկատմամբ գանձվող հարկերը:

3. Սույն Կոնվենցիան կիրառվում է մասնավորապես գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ.

ա) Իսպանիայում՝

i) ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկ,

ii) ձեռնարկությունների շահութահարկ,

iii) ռեզիդենտ չհանդիսացող անձանցից գանձվող եկամտահարկ,

iv) գույքահարկ և

v) եկամտների և գույքի նկատմամբ գանձվող տեղական հարկեր

(այսուհետ՝ իսպանական հարկ):

բ) Հայաստանում՝

i) շահութահարկ,

ii) եկամտահարկ և

iii) գույքահարկ

(այսուհետ՝ հայկական հարկ):

4. Սույն Կոնվենցիան կիրառվում է նաև նույնական կամ էպպես նման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց կժանուցեն իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված նշանակալի փոփոխությունների մասին:

### Հոդված 3 ԸՆԴՂԱՆՈՒՐ ԱՆՂԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար, եթե համատեքստն այլ բան չի պահանջում.

ա) «Իսպանիա» տերմինը նշանակում է՝ Իսպանիայի Թագավորություն, իսկ երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ Իսպանիայի Թագավորության տարածքը՝ ներառյալ ներքին ջրերը, տարածքային ծովը և տարածքային ծովից դուրս ցանկացած գոտի, որի նկատմամբ, միջազգային իրավունքի համաձայն և իր ներքին օրենսդրության կիրարկմամբ, Իսպանիայի Թագավորությունն իրականացնում է կամ ապագայում կարող է իրականացնել իրավագրություն կամ ինքնիշխան իրավունքներ ծովի հատակի, ընդերքի ու վերին շերտի ջրերի և դրանց բնական պաշարների նկատմամբ,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետություն, իսկ երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ այն տարածքը՝ ներառյալ հողերը, ջրերը, ընդերքը և օդային տարածքը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքներ և իրավագրություն՝ ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի համաձայն,

գ) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները նշանակում են՝ Իսպանիա կամ Հայաստան՝ կախված համատեքստից,

դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած միավոր, որը հարկման նպատակներով դիտվում է որպես իրավաբանական անձ,

զ) «ձեռնարկություն» տերմինը կիրառվում է ձեռնարկատիրական ցանկացած գործունեության իրականացման նկատմամբ,

է) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

ը) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության

ծեռնարկության կողմից շահագործվող նավով, օդանավով կամ ճանապարհային փոխադրամիջոցով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նավը, օդանավը կամ ճանապարհային փոխադրամիջոցը շահագործվում են բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,

- բ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.
- i) Իսպանիայում՝ Էկոնոմիկայի և ֆինանսների նախարար կամ նրա լիազորված ներկայացուցիչ,
- ii) Հայաստանում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար, հարկային պետական ծառայության պետ կամ նրանց լիազորված ներկայացուցիչներ,
- ժ) «քաղաքացի» տերմինը նշանակում է.
- i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,
- ii) ցանկացած իրավաբանական անձ, ընկերություն կամ միավորում, որոնք իրենց կարգավիճակը, որպես այդպիսին, ստացել են Պայմանավորվող պետությունում գործող օրենքների համաձայն,
- ժա) «ծեռնարկատիրություն» տերմինը ներառում է մասնագիտական ծառայությունների և անկախ բնույթի այլ գործունեության իրականացումը:

2. Ինչ վերաբերում է Պայմանավորվող պետության կողմից ցանկացած պահի սույն Կոնվենցիայի կիրառմանը, դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե համատեքստն այլ բան չի պահանջում, պետք է ունենա այն նշանակությունը, որն այդ պահին ունի տվյալ Պետության օրենքով այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան, ընդ որում՝ տվյալ Պետությունում կիրառելի հարկային օրենքներով սահմանված ցանկացած նշանակություն գերակայում է այդ Պետության այլ օրենքներով տվյալ տերմինին տրվող նշանակության նկատմամբ:

#### **Հոդված 4 ՌԵԶԻԴԵՆՏ**

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը տվյալ Պետության օրենքներով ենթակա է հարկման այդ Պետությունում իր մշտական բնակության վայրի, կեցության, ընկերության վայրի, կառավարման վայրի կամ ցանկացած նման այլ չափանիշի հիման վրա, ինչպես նաև ներառում է տվյալ Պետությունը և նրա քաղաքական ստորաբաժանումը կամ տեղական իշխանությունները: Այս տերմինը, այնուամենայնիվ, չի ներառում այն անձին, որն այդ Պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պետությունում գտնվող աղբյուրներից ստացված եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի մասով:

2. Եթե, 1-ին կետի դրույթների համաձայն, ֆիզիկական անձը երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ է, ապա նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպով.

ա) նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան. եթե նա երկու Պետություններում էլ իր տրամադրության տակ ունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն ավելի սերտ են (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից ոչ մեկում իր տրամադրության տակ չունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որտեղ սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում կամ դրանցից ոչ մեկում չի բնակվում, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որի քաղաքացին է,

դ) եթե նա հանդիսանում է երկու Պետությունների քաղաքացի կամ դրանցից ոչ մեկի քաղաքացի չէ, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Եթե, 1-ին կետի դրույթների համաձայն, անձը, որը ֆիզիկական անձ չէ, հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները պետք է ջանքեր գործադրեն հարցը փոխադարձ համաձայնությամբ լուծելու համար՝ նկատի ունենալով անձի՝ արդյունավետ կառավարման վայրը և համապատասխան տնտեսական ու նյութական մյուս գործոնները: Նման համաձայնության բացակայության դեպքում, Կոնվենցիայի նպատակների համար, անձն իրավասու չէ պահանջելու սույն Կոնվենցիայով նախատեսված որևէ արտոնություն:

#### **Հոդված 5 ՄԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ**

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որտեղ ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ծեռնարկության գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը հատկապես ներառում է.

ա) կառավարման վայրը,

բ) մասնաձյուղը,

գ) գրասենյակը,

դ) գործարանը,

ե) արտադրամասը,

զ) որպես առևտրի կետեր օգտագործվող շինությունները և

է) հանքահորը, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարների արդյունահանման ցանկացած այլ վայր:

3. Շինարարական հրապարակը, կառուցապատման, մոնտաժման կամ տեղակայման նախագծումը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը համարվում են մշտական հաստատություն միայն այն դեպքում, երբ հրապարակի շահագործման, նախագծման կամ գործունեության տևողությունը ինն ամսից ավելի է:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում.

ա) շինությունների օգտագործումը ծեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

բ) ծեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

գ) ծեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ

ծեռնարկության կողմից մշակման նպատակով,

դ) ձեռնարկության համար գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության մշտական վայրի պահումը ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես «ա»-«ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համադրման համար՝ պայմանով, որ այդ համադրման արդյունքում գործունեության մշտական վայրի ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է:

5. Չնայած 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ երբ անձը, որը չի հանդիսանում անկախ կարգավիճակ ունեցող գործակալ, որի նկատմամբ կիրառվում է 6-րդ կետը, գործում է ձեռնարկության անունից, ունի և սովորաբար օգտվում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասությունից, ապա տվյալ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող այդ Պետությունում այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար իրականացվող ցանկացած գործունեության առնչությամբ, եթե տվյալ անձի գործունեությունը չի սահմանափակվում 4-րդ կետում նշվածով, ինչը գործունեության մշտական վայրի միջոցով իրականացնելիս այդ գործունեության մշտական վայրը չէր վերածի մշտական հաստատության՝ տվյալ կետի դրույթների համաձայն:

6. Ձեռնարկությունը չի համարվում Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ իր ձեռնարկատիրական գործունեությունը այդ Պետությունում իրականացնում է միջնորդի, առևտրային միջնորդ գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ տվյալ անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում է մի ընկերություն կամ վերահսկվում է մի ընկերության կողմից, որը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է հանդիսանում կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպով), ինքնին այդ ընկերություններից որևէ մեկին չի դարձնում մյուսի մշտական հաստատությունը:

## **Հոդված 6 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵՎԱՍՈՒՑ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է տվյալ գույքը: Ամեն դեպքում այդ տերմինը ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունները, սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման իրավունքը (ուզուֆրուկտ) և հանքավայրերի, աղբյուրների և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց վճարվող՝ փոփոխական կամ ամրագրված վճարումների իրավունքները. նավերը, օդանավերը և ճանապարհային փոխադրամիջոցները չեն համարվում անշարժ գույք:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, այն վարձակալության տալուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. Եթե ընկերության բաժնետոմսերի կամ այլ իրավունքների սեփականատեր լինելը ուղղակի կամ անուղղակի կերպով իրավունք է տալիս այդ բաժնետոմսերի կամ իրավունքների սեփականատիրոջը օգտվելու անշարժ գույքից, ապա այդ իրավունքից օգտվելու արդյունքում այդ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տալուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտը կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է այդ անշարժ գույքը:

5. 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

## **Հոդված 7 ՇԱՀՈՒՅՑ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՑ**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե ձեռնարկությունն իր գործունեությունը չի իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունն իր գործունեությունն իրականացնում է վերոնշյալ կերպով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում միայն այն չափով, որը վերագրելի է տվյալ մշտական հաստատությանը:

2. 3-րդ կետի դրույթների համաձայն, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույնպիսի կամ համանման պայմաններում գործող, նույնպիսի կամ համանման գործունեություն իրականացնող ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է մշտական հաստատության գործունեության նպատակներով կատարած ծախսերի, այդ թվում՝ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերի նվազեցում՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք կատարվել են այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը, թե այլ վայրում:

4. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության տարբեր մասերի միջև ձեռնարկության ընդհանուր շահույթի համամասնական բաշխման հիման վրա, ապա 2-րդ կետի դրույթներն այդ Պայմանավորվող պետությանը չեն խոչընդոտում հարկման ենթակա շահույթը որոշել բաշխման այդպիսի ընդունված եղանակով. այնուամենայնիվ, բաշխման ընդունված եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածի սկզբունքներին:

5. Մշտական հաստատությանը շահույթ չի վերագրվում միայն այն պատճառով, որ այդ մշտական հաստատությունը ձեռնարկության համար ապրանքներ կամ արտադրանք է գնում:

6. Նախորդ կետերի նպատակների համար՝ մշտական հաստատությանը վերագրվող շահույթն ամեն տարի որոշվում է նույն եղանակով, եթե չկա այն փոխելու հիմնավոր ու բավարար պատճառ:

7. Եթե շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնց մասին առանձին նշվում է սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

### **Հոդված 8 ՄԻՋԱՋՊԱՅԻՆ ՓՈՒՍԱԴՐՈՒՄՆԵՐ**

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի կամ ձանապարհային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև ընկերությունների միավորմանը, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից ստացված շահույթի նկատմամբ:

### **Հոդված 9 ՓՈՒՍԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Եթե.

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցություն ունի մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարման, վերահսկման գործում կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցություն ունեն Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարման, վերահսկման գործում կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են երկու անկախ ձեռնարկությունների միջև գործող պայմաններից, ապա ցանկացած շահույթ, որ այդ պայմանների բացակայության դեպքում կվերագրվեր ձեռնարկություններից մեկին, բայց այդ պայմանների առկայության պատճառով չի արվել, կարող է ներառվել տվյալ ձեռնարկության շահույթում և համապատասխանաբար հարկվել:

2. Եթե Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթում ներառում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի համար մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պայմանավորվող պետությունում, և այդ մյուս Պետությունը համաձայնում է, որ այդ կերպով ներառված շահույթը կարող էր վերագրվել առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև գործող պայմանները լինեին այնպիսին, ինչպիսին անկախ ձեռնարկությունների միջև են, ապա այդ մյուս Պետությունը կատարում է տվյալ շահույթից գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդ ճշգրտումը կատարելիս պատշաճ կերպով հաշվի են առնվում սույն Կոնվենցիայի մյուս դրույթները, և Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններն անհրաժեշտության դեպքում խորհրդակցում են միմյանց հետ:

### **Հոդված 10 ՇԱՀԱՔԱԺԻՆՆԵՐ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. ա) Այնուամենայնիվ, այդ շահաբաժինները կարող են նաև հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենքների համաձայն. բայց եթե շահաբաժինների շահառու սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ կերպով գանձված հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը:

բ) Չնայած վերը նշված ենթակետի դրույթներին՝ Պայմանավորվող պետությունը, որի ռեզիդենտ ընկերությունն է շահաբաժիններ վճարում, ազատում է հարկից այն շահաբաժինները, որ այդ ընկերության կողմից վճարվում են մի ընկերության, որի կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ բաժանված է բաժնեմասերի, քանի դեռ.

i) շահաբաժինների շահառու սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է,

ii) նա ուղղակի կամ անուղղակի կերպով, նախքան այդ վճարումից առնվազն 2 տարի առաջ տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալի առնվազն 25 տոկոսը, և

iii) այդ շահաբաժինները մյուս Պայմանավորվող պետությունում ենթակա չեն շահութահարկով հարկման:

Սույն կետի դրույթները չեն ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանջ չհանդիսացող շահույթի մասնակցության այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպես բաժնետոմսերից ստացված եկամուտը համաձայն այն պետության օրենքների, որի ռեզիդենտ է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների շահառու սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և բաժնետիրական հողիմնադրումը, որի առնչությամբ վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Եթե Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, ապա այդ մյուս Պետությունը կարող է չհարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության

ռեզիդենտին, կամ երբ բաժնետիրական հոլդինգային ընկերությունը, որի առնչությամբ վճարվում են շահաբաժինները, փաստացի կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, ինչպես նաև չի կարող ընկերության չբաշխված շահույթը ենթարկել հարկման չբաշխված շահույթի հարկատեսակով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

## Հոդված 11 ՏՈԿՈՍՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Այնուամենայնիվ, այդ տոկոսները կարող են հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են, և՛ այդ Պետության օրենքների համաձայն. բայց եթե տոկոսների շահառու սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ կերպով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը:  
Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:
3. «Տոկոս» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բոլոր տեսակի պարտապահանջներից՝ անկախ այն բանից՝ ապահովված են դրանք գրավադրմամբ, թե ոչ, կամ՝ ունեն պարտապահի շահույթին մասնակցելու իրավունք, և, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից և եկամուտ պարտատոմսերից կամ պարտագրերից՝ ներառյալ այդ արժեթղթերին, պարտատոմսերին ու պարտագրերին կից ապահովագրական վճարներն ու պարգևատրումները: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը չեն դիտարկվում որպես տոկոսներ սույն հոդվածի նպատակների համար:
4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների շահառու սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, փաստացի կապված է այդ մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:
5. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, երբ վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Այնուամենայնիվ, եթե տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու փաստից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է պարտք, որի առնչությամբ տոկոսներ են վճարվում, և այդ տոկոսների վճարումն իրականացնում է այդ մշտական հաստատությունը, ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:
6. Եթե վճարողի և շահառու սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջի առնչությամբ վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և շահառու սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը ենթակա է հարկման յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքների համաձայն պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

## Հոդված 12 ՌՈՅԱԼՆԵՐ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Այնուամենայնիվ, այդ ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ այն առաջանում է և այդ Պետության օրենքներին համապատասխան, բայց եթե ռոյալթիի շահառու սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ է, ապա այդ կերպով գանձվող հարկը չպետք է գերազանցի.  
ա) գրական, գեղարվեստական կամ գիտական աշխատանքների, ներառյալ՝ ռադիո- կամ հեռուստահաղորդումների հեռարձակման համար օգտագործվող կինոժապավենների կամ ժապավենների կամ ձայներիզների օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար վճարված ռոյալթիի համախառն գումարի 5 տոկոսը,  
բ) ռոյալթիի համախառն գումարի 10 տոկոսը՝ բոլոր մյուս դեպքերում:  
Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը որոշում են փոխադարձ համաձայնությամբ:
3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ ցանկացած տեսակի վճարում գրական, գեղարվեստական կամ գիտական աշխատանքների, ներառյալ՝ ռադիո- կամ հեռուստահաղորդումների հեռարձակման համար օգտագործվող կինոժապավենների կամ ժապավենների կամ ձայներիզների, ցանկացած արտոնագրի, ապրանքային նշանի, ձևավորման կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի օգտագործման կամ օգտագործման իրավունքի դիմաց, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձի վերաբերող տեղեկությունների օգտագործման կամ օգտագործման իրավունքի դիմաց:
4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի շահառու սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որի առնչությամբ վճարվում է ռոյալթին, փաստացի կապված է այդ մշտական հաստատության հետ: Այդ դեպքերում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:
5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողը հենց այդ Պետությունն է, այդ Պետության քաղաքական ստորաբաժանումը, տեղական իշխանությունը կամ ռեզիդենտը: Այնուամենայնիվ, երբ ռոյալթի վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու փաստից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարման պարտավորությունը, և այդ ռոյալթիի վճարումն իրականացնում է տվյալ մշտական հաստատությունը, ապա այդ ռոյալթին համարվում է առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական

հաստատությունը:

6. Եթե վճարողի և շահառու սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության դիմաց վճարվող ռոյալթի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և շահառու սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը ենթակա է հարկման յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքների համաձայն՝ պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

### **Հոդված 13 ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱԾ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ 6-րդ հոդվածում նշված և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից ստացած հավելվածը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի օտարումից ստացած հավելվածը, ներառյալ այդ մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) օտարումից ստացված նման հավելվածը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի, օդանավերի կամ ճանապարհային փոխադրամիջոցների կամ այդ նավերի, օդանավերի կամ ճանապարհային փոխադրամիջոցների շահագործմանն առնչվող շարժական գույքի օտարումից Պայմանավորվող պետության ձեռնարկության ստացած հավելվածը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ ընկերության բաժնետոմսերի կամ համադրելի տոկոսների օտարումից ստացած հավելվածը, որի արժեքի ավելի քան 50 տոկոսն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջանում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

5. Բաժնետոմսերի կամ այլ իրավունքների օտարումից առաջացած հավելվածը, որն այդ բաժնետոմսերի կամ իրավունքների սեփականատիրոջն ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրավունք է տալիս օգտվելու Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ Պետությունում:

6. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում չնշված ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած հավելվածը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում օտարող անձը:

### **Հոդված 14 ԵԿԱՄՈՒՏ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ**

1. Հաշվի առնելով 15-րդ, 17-րդ ու 18-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը և համանման այլ վարձատրությունը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքն իրականացվում է այդ կերպով, ապա դրա դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե.

ա) ստացողը տվյալ ֆինանսական տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով,

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի հոգում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ միջազգային փոխադրումներում շահագործվող նավում, օդանավում կամ ճանապարհային փոխադրամիջոցում իրականացվող աշխատանքի դիմաց Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած վարձատրությունը կարող է հարկվել այդ Պետությունում:

### **Հոդված 15 ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ**

Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ ընկերության տնօրենների խորհրդի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած՝ տնօրենների հոնորարները և համանման այլ վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

### **Հոդված 16 ԱՐԿԵՍՏԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ ԵՎ ՍԱՐՁԻԿՆԵՐ**

1. Չնայած 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես թատրոնի, կինոյի դերասան, ռադիոյի կամ հեռուստատեսության հաղորդավար կամ երաժիշտ, կամ որպես մարզիկ իր մասնագիտական գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե դերասանի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած գործունեության դիմաց ստացած եկամուտը վերագրվում է ոչ թե անձամբ դերասանին կամ մարզիկին, այլ մեկ այլ անձի, ապա այդ եկամուտը, չնայած 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է դերասանի կամ մարզիկի գործունեությունը:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե դերասանի կամ մարզիկի՝ Պայմանավորվող

պետությունում իրականացրած գործունեությունն ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվում է մյուս Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության հանրային միջոցներից՝ երկու Պայմանավորվող պետությունների հավանությանն արժանացած մշակութային և մարզական փոխանակման ծրագրերի շրջանակներում: Այդ դեպքում այդ գործունեությունից ստացված եկամուտը կարող է հարկվել միայն մյուս Պայմանավորվող պետությունում:

#### **Հոդված 17 ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ**

Հաշվի առնելով 18-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները Պայմանավորվող պետության ռեզիդենտին նախկին վարձու աշխատանքի համար վճարվող կենսաթոշակները և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

#### **Հոդված 18 ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

1.
  - ա) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանությունների կողմից այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ տեղական իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց անհատին վճարվող աշխատավարձը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:
  - բ) Այնուամենայնիվ, այդ աշխատավարձը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում, և անհատն այդ Պետության ռեզիդենտ է, որը:
    - i) այդ մյուս Պետության քաղաքացի է, կամ
    - ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:
2.
  - ա) Զնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության կողմից կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից անհատին՝ այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ տեղական իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց վճարվող կենսաթոշակը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:
  - բ) Այնուամենայնիվ, այդ կենսաթոշակը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե անհատն այդ Պետության ռեզիդենտ է և քաղաքացի:
3. 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են այն ծառայությունների մատուցման դիմաց ստացված աշխատավարձերի, կենսաթոշակների և համանման այլ վարձատրությունների նկատմամբ, որոնք կապված են Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության կողմից իրականացված ձեռնարկատիրական գործունեության հետ:

#### **Հոդված 19 ՌԻԱՆՈՂՆԵՐ**

Ուսանողը կամ փորձակը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջինը հիշատակված Պետությունում բացառապես ուսման կամ վերապատրաստման նպատակով, այդ մյուս Պետությունում չի հարկվում իր կեցության, ուսման կամ վերապատրաստման համար ստացած վճարումների առնչությամբ՝ պայմանով, որ այդ վճարումները ստացվեն այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

#### **Հոդված 20 ՂԱՍԽՈՄՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ**

Մյուս Պայմանավորվող պետություն ժամանելուց հետո Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող անհատի, որն այդ մյուս Պայմանավորվող պետության կառավարության կամ այդ մյուս Պետությունում գտնվող համալսարանի կամ պաշտոնապես ճանաչված ուսումնական այլ հաստատության իրավերով գտնվում է այդ մյուս Պետությունում՝ այդ համալսարանում կամ պաշտոնապես ճանաչված ուսումնական հաստատությունում հիմնականում դասավանդելու կամ հետազոտություն իրականացնելու կամ երկուսի նպատակով, ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում այդպիսի գործունեությունից ստացած եկամտի առնչությամբ՝ մյուս Պետություն ժամանելու օրվանից երկու տարին չգերազանցող ժամանակահատվածում:

#### **Հոդված 21 ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ**

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չհիշատակված եկամտի տարրերը, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:
2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում, 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից բացի, այլ եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, և իրավունքը կամ գույքը, որի առնչությամբ վճարվել է եկամուտը, փաստացի կապված է այդ մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

#### **Հոդված 22 ԳՈՒՅՔ**

1. 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքով ներկայացված՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին

պատկանող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:  
2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի, օդանավերի կամ ճանապարհային փոխադրամիջոցների և այդ նավերի, օդանավերի կամ ճանապարհային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող՝ շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է հանդիսանում այդ գույքի սեփականատեր ձեռնարկությունը:

4. Ընկերության կամ անձանց ցանկացած այլ միավորման բաժնետոմսերից կամ այլ իրավունքներից բաղկացած կապիտալը, որի արժեքի ավելի քան 50 տոկոսն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջանում է Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից կամ բաժնետոմսերից կամ այլ իրավունքներից, որոնք իրենց սեփականատիրոջը տալիս են Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից օգտվելու իրավունք, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

5. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի մյուս բոլոր տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

### Հոդված 23 ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՅԱՌՈՒՄ

1. Իսպանիայում կրկնակի հարկումը բացառվում է կամ իր ներպետական օրենսդրության դրույթների համաձայն, կամ Իսպանիայի ներպետական օրենսդրությանը համապատասխան՝ հետևյալ դրույթներով.

ա) եթե Իսպանիայի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույքի տարրեր է տնօրինում, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Հայաստանում, ապա Իսպանիան թույլ է տալիս.

i) այդ ռեզիդենտի եկամտահարկի նվազեցում Հայաստանում վճարվող եկամտահարկին հավասար գումարի չափով,

ii) այդ ռեզիդենտի գույքահարկի նվազեցում գույքի միևնույն տարրերի համար Հայաստանում վճարվող հարկին հավասար գումարի չափով,

iii) հիմնական շահութահարկի նվազեցում՝ Իսպանիայի ներպետական օրենսդրության համաձայն:

Այնուամենայնիվ, այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցումը հաշվարկված եկամտահարկի կամ գույքի հարկի այն մասը, որը, ըստ անհրաժեշտության, վերագրելի է այն եկամտին կամ գույքի միևնույն տարրերին, որոնք կարող են հարկվել Հայաստանում:

բ) Եթե, սույն Կոնվենցիայի ցանկացած դրույթին համապատասխան, Իսպանիայի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքն Իսպանիայում ազատված է հարկումից, ապա Իսպանիան, այնուամենայնիվ, այդ ռեզիդենտի եկամտից կամ գույքի մնացած մասից գանձվող հարկի գումարը հաշվարկելիս կարող է հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը կամ գույքը:

2. Հայաստանում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպով.

ա) եթե Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տնօրինում, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Իսպանիայում, ապա Հայաստանը թույլ է տալիս.

i) այդ ռեզիդենտի եկամտահարկի նվազեցում Իսպանիայում վճարվող եկամտահարկին հավասար գումարի չափով,

ii) այդ ռեզիդենտի գույքահարկի նվազեցում Իսպանիայում վճարվող գույքահարկին հավասար գումարի չափով:

Այնուամենայնիվ, այդպիսի նվազեցումը յուրաքանչյուր դեպքում չպետք է գերազանցի մինչև նվազեցումը հաշվարկված եկամտահարկի կամ գույքի հարկի այն մասը, որը, ըստ անհրաժեշտության, վերագրելի է այն եկամտին կամ գույքին, որը կարող է հարկվել Իսպանիայում:

բ) Եթե, սույն Կոնվենցիայի ցանկացած դրույթին համաձայն, Հայաստանի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը Հայաստանում ազատված է հարկումից, ապա Հայաստանը, այնուամենայնիվ, այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի հարկի գումարը հաշվարկելիս կարող է հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը կամ գույքը:

3. Իսպանիայում հաշվանցման թույլատրման նպատակներով Հայաստանում վճարված հարկը ներառում է այն հարկը, որն այլ դեպքերում ենթակա է վճարման Հայաստանում, սակայն Հայաստանի կողմից նվազեցվել կամ չեղյալ է հայտարարվել 1997 թվականի սեպտեմբերի 30-ի՝ «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի դրույթների համաձայն (Օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի արտոնությունները): Այս կետի դրույթները կիրառվում են սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից 5 տարվա ընթացքում:

### Հոդված 24 ԱՆՍՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները մյուս Պայմանավորվող պետությունում չեն ենթարկվում որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության կատարման, ինչը տարբերվում է կամ ավելի ծանր է, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որոնց միևնույն հանգամանքների դեպքում ենթարկվում կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության քաղաքացիները՝ մասնավորապես կապված բնակության վայրի հետ: Չնայած 1-ին հոդվածի դրույթներին՝ սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է լինի նվազ բարենպաստ, քան համանման գործունեություն իրականացնող այդ մյուս Պետության ձեռնարկությունների հարկումը: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով տրամադրել այնպիսի անձնական արտոնություններ, թեթևացումներ և զեղչեր, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը տրամադրում է իր ռեզիդենտներին:

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 6-րդ կետի կամ

12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները, ժողովրդները և այլ վճարումները այդ ձեռնարկության հարկվող շահույթը որոշելու նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչ առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության պարտքերը մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկման ենթակա գույքը որոշելու նպատակով, ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչ առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտի պարտքերը:

4. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալը ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է կամ ուղղակի կամ անուղղակի կերպով տնօրինվում կամ վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտի կողմից, չպետք է առաջինը հիշատակված Պետությունում ենթարկվեն հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, որոնք տարբերվում է կամ ավելի ծանր են, քան այն հարկումը և պահանջներն են, որոնց ենթարկվում կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված Պետության նմանատիպ այլ ձեռնարկությունները:

5. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կիրառվում են ցանկացած տեսակի և բնույթի հարկերի նկատմամբ:

#### Հոդված 25 ՓՈՒՆՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Եթե անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենքներով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, դիմում ներկայացնել այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտ է հանդիսանում, կամ, եթե գործը վերաբերում է սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի քաղաքացին է: Դիմումը պետք է ներկայացվի սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է արդարացի, և եթե ինքն ի վիճակի չէ գտնելու գոհացուցիչ լուծում, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Չեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է կիրառվի՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենքներում առկա որևէ ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացած ցանկացած դժվարություն կամ կասկած կծգտեն լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ՝ Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի մասով համաձայնության հասնելու նպատակով: Երբ համաձայնության հասնելու համար նպատակահարմար է կազմակերպել կարծիքների բանավոր փոխանակում, այդ փոխանակումը կարող է կատարվել Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի միջոցով:

#### Հոդված 26 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՒՆԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են այնպիսի տեղեկություններ, որոնք ենթադրաբար կարևոր են սույն Կոնվենցիայի դրույթների իրականացման կամ Պայմանավորվող պետությունների կամ նրանց քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմինների կողմից կիրառվող ցանկացած տեսակի և բնույթի հարկերի մասով ներպետական օրենքների կատարման կամ կիրարկման հետ այնքանով, որքանով դրանցով սահմանված հարկումը չի հակասում Կոնվենցիային: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում 1-ին և 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության կողմից 1-ին կետի համաձայն ստացված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես այդ Պետության ներպետական օրենքներով ստացված տեղեկությունը, և հրապարակվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ հավաքմանը, դրանց հարկադիր գանձմանը կամ դրանց առնչությամբ դատական հետապնդմանը, բողոքարկումների քննարկմանը կամ վերոնշյալի վերահսկմանը: Այդ անձինք կամ մարմինները տեղեկություններն օգտագործում են միայն այդ նպատակների համար: Նրանք կարող են տեղեկությունները հրապարակել դռնբաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ:

Չնայած վերոնշյալին՝ Պայմանավորվող պետության կողմից ստացված տեղեկությունը կարող է օգտագործվել այլ նպատակների համար, եթե այդ տեղեկությունը կարող է օգտագործվել նման այլ նպատակների համար դիմող Պետության օրենքներով, և տեղեկություն տրամադրող Պետության իրավասու մարմինը լիազորել է այդպիսի օգտագործումը:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

ա) իրականացնել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին և վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնել տեղեկություն, որը չի կարելի ստանալ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

գ) ներկայացնել տեղեկություն, որը կիրառարակի որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ այնպիսի տեղեկություն, որի հրապարակումը կհակասի պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե տեղեկությունը Պայմանավորվող պետության կողմից պահանջվում է սույն հոդվածի նպատակով, մյուս Պայմանավորվող պետությունը օգտագործում է տեղեկություններ հավաքելու իր

միջոցները պահանջվող տեղեկությունն ստանալու համար, եթե նույնիսկ այդ մյուս Պետությունը այդ տեղեկության կարիքը չունի հարկման սեփական նպատակների համար: Նախորդ նախադասության մեջ նշված պարտավորությունը ենթակա է 3-րդ կետի սահմանափակումներին, բայց ոչ մի դեպքում այդ սահմանափակումները չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետության կողմից տեղեկության տրամադրումը մերժելու իրավունք միայն այն պատճառով, որ նա չունի ներքին հետաքրքրություն այդ տեղեկության նկատմամբ:

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվում որպես Պայմանավորվող պետության կողմից տեղեկության տրամադրումը մերժելու իրավունք միայն այն պատճառով, որ տեղեկությունը տնօրինվում է բանկի, ֆինանսական այլ հաստատության, հավատարմագրված անձի կամ գործակալությունում աշխատող անձի կամ վստահված անձի կողմից կամ վերաբերում է անձի սեփականատիրական շահերին:

#### **Հոդված 27**

### **ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՄԱՏՈՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ**

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հաստատությունների անդամներին միջազգային իրավունքի ընդհանուր նորմերով կամ հատուկ համաձայնագրերի դրույթներով տրամադրված հարկային արտոնությունների վրա:

#### **Հոդված 28**

### **ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

1. Պայմանավորվող պետությունները դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու համար յուրաքանչյուր Պայմանավորվող պետության կողմից պահանջվող ներքին ընթացակարգերի կատարման մասին:

2. Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 1-ին կետում նշված ծանուցումներից վերջինի ստացման օրվանից երեք ամիս հետո, և նրա դրույթները գործում են.

ա) պարբերաբար զանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից կամ դրանից հետո սկսվող հարկային ցանկացած տարվան վերաբերող եկամտահարկերի մասով,

բ) մյուս բոլոր դեպքերում Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից:

#### **Հոդված 29**

### **ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում մինչև Պայմանավորվող պետության կողմից դադարեցվելը:

Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դիվանագիտական ուղիներով դադարեցնել Կոնվենցիայի գործողությունը ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարի հետո՝ ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ, դադարեցման մասին գրավոր ծանուցելով: Այդ դեպքում Կոնվենցիան դադարում է գործել.

ա) պարբերաբար զանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցման տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող հարկային ցանկացած տարվան վերաբերող եկամտահարկերի նկատմամբ,

բ) մյուս բոլոր դեպքերում ծանուցման տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին:

Ի վկայումն որի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Մադրիդ քաղաքում 2010 թվականի դեկտեմբերի 16-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, իսպաներեն և անգլերեն. բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Տեքստերի միջև տարբերությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

### **ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի Հանրապետության և Իսպանիայի Թագավորության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիան ստորագրելիս ներքոստորագրյալները համաձայնեցին Կոնվենցիայի անբաժանելի մաս կազմող հետևյալ դրույթների շուրջ**

I. 2-րդ հոդվածի 2-րդ կետի առնչությամբ.

Հասկանալի է, որ սոցիալական ապահովության վճարները կամ համանման այլ վճարները չեն համարվում եկամտահարկ:

II. 2-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ.

Հասկանալի է, որ Հայաստանում տեղական հարկեր սահմանելու դեպքում սույն Կոնվենցիայի դրույթները կիրառվում են նաև այդ հարկերի նկատմամբ:

III. 5-րդ հոդվածի 4-րդ կետի առնչությամբ.

Հասկանալի է, որ «առաքում» տերմինը չի ընդգրկում հետևյալ դեպքերը.

ա) առևտրային որևէ տոնավաճառում ցուցադրված արտադրանքի վաճառք դրա ավարտից հետո,

բ) առևտրով զբաղվող խանութ ապրանքի առաքման համար նախատեսված շինությունում:

IV. 10-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի առնչությամբ.

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կարգավորում են 10-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով սահմանված սահմանափակման կիրառման եղանակը:

V. 13-րդ հոդվածի 4-րդ կետի առնչությամբ.

Սույն կետն ընդգրկում է բաժնետոմսերից և տոկոսների օտարումից առաջացած հավելաճը այլ ընկերություններում, ինչպիսիք են գործընկերությունները, միավորումը և այլն, որոնք չեն թողարկում բաժնետոմսեր, քանի դեռ այդ տոկոսների արժեքը գլխավորապես առաջանում է անշարժ գույքից:

VI. Պայմանագրի արտոնությունների իրավունք

i) Պայմանավորվող պետությունները հայտարարում են, որ օրենքի խախտումների (ներառյալ՝ հարկային պայմանագրերի) վերաբերյալ իրենց ներպետական կանոնները և ընթացակարգերը կարող են կիրառվել խախտումների ուղղման նկատմամբ:

ii) Հասկանալի է, որ սույն Կոնվենցիայով սահմանված արտոնությունները չեն տրամադրվում այն անձին, որը մյուս Պայմանավորվող պետությունից ստացված եկամտի տարրերի կամ այդ Պետության գույքի տարրերի շահառու սեփականատերը է:

iii) Սույն Կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի արգելում կիրառել Վերահսկելի օտարերկրյա ընկերությունների մասին ներպետական կանոնները:

VII. «Հարկահավաքման գործում աջակցության մասին» հոդվածի առնչությամբ.

Երկու Պայմանավորվող պետությունները համաձայնել են Կոնվենցիայում ներառել «Հարկահավաքման գործում աջակցության մասին» հոդված իրենց ներքին օրենսդրությամբ նման տեսակի օգնություն թույլատրվելուն պես:

Ի վկայումն որի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Մադրիդ քաղաքում 2010 թվականի դեկտեմբերի 16-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, իսպաներեն և անգլերեն. բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Տեքստերի միջև մեկնաբանության տարբերությունների դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

*Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2012 թ. մարտի 21-ին*